ԲԵՅՐՈՒԹԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ ՔԱՆԱՄՅԱԿԸ

Սույն թվականի մարտի 22-ին, կիրակի օրը, ժամը 12-ին, Բեյրութում, Ալեքս Մանուկյան Ասպետների Կենտրոնում, տեղի է ունեցել Կրոնասեր Տիկնանց Համախմբումի հիմնադրման և գործունեության քսանամյակին նվիրված հոբելյանական հանդիսություն, որին ներկա է եղել Ս. Հռիփսիմե վանքի վանահայր և Մայր Աթոռի միաբան Տ. Մասիս վարդապետ Գալստյանը, հրավերովը Տիկնանց Վարչության:

Բեյրութի Կրոնասեր Տիկնանց Համախմբումը հիմնվել է 1959 թվականի հունվարի 13-ին:

Համախմբումի նպատակն է եղել հայոց սրտերում վառ պահել քրիստոնեական կրոնը, հավատարիմ մնալ Հայաստանյայց Եկեղեցու հավատքին, ավանդություններին և պայծառացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եկեղեցիները՝ նպաստելով նրանց բարեզարդմանը:

Բարեպաշտ այս տիկինները տևապես աշխատել են հոգևոր և կրոնանվեր կյանքի տարածմանը ու ամրապնդմանը, հայ ընտանեկան հարկերից ներս, հանախակի կազմակերպել դասախոսություններ և հանդիսություններ:

Համախմբումը իր հիմնադրման առաջին իսկ օրից վայելել է Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն ու քաջալերությունը, արժանացել հայրապետական կոնդակների, իր աստվածահաճո և եկեղեցաշեն ձեռնարկների համար: «Խոր հուզումով և հիացումով կհաստատենք ձեր նվիրյալ ու անձնուրաց այս ոգին,—գրել է Հայոց Հայրապետը Համախմբումի Կրոնասեր Տիկնանց ուղղած 1977 թվականի հուլիս 27 թվակիր Իր սրբատառ կոնդակում,—դուք հարազատ հաջորդներն եք Սուրբ Հռիփսիմյանց և Սուրբ Գայանյանց կույսերուն, որոնք հիմքերը դնողները եղան, մեր ազգի քրիստոնեական լույս հավատքին»:

Համախմբումը պարբերաբար իր քսանամյա գործունեության մասին տեղեկագրեր է ուղարկել Հայոց Հայրապետին և ցուցակը Էջմիածնի Մայր տաճարի պայծառության և Հայաստանի եկեղեցիների բարեզարդումի համար իր կատարած նվիրատվությունների և այլ իրագործումների (Տես այս մա-

սին «Էջմիածին» ամսագիր, 1980, № ԺԱ, էջ 52—53):

Ամենայն Հայոց Հայրապետը, բարձր գնահատելով Բեյրութի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի քսանամյա գործունեության «նվիրումի և զոհաբերության անսակարկ հոգին», բարեհաճել էր անցյալ տարի Իր սրբատառ կոնդակով (սեպտեմբեր 16 և 20) և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրել Վարչության 10 անդամները Տանձիկյանը՝ շեշտելով Համախմբումի հավատարմությունն ու նվիրումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և նրա արժանավոր Գահակալի հանդեպ:

Այնուհետև խանդավառ մթնոլորտում Տ. Մասիս վրդ. Գալստյանը հրավիրվում է ընթերցելու Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակները և Վարչության տասը անդամների կրծքերը զարդարում է Ս. Էջմիածնից բերված «Ս. Ներսես Շնորհալի» շքա-

Բեյրութի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի վարչականները Տ. Մասիս վարդապետի հետ (22 մարտի 1981 թ., Բեյրութ)

նրանց երկարամյա գործունեության համար «քաջալերելով զիրենք իրենց սրբանվեր հաջող առաքելության համար, նպատակ ունենալով բարեկարգ ու շեն պահել Հայաստանյայց եկեղեցիները և հատկապես նպաստել Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի պայծառության» («Էջմիածին» ամսագիր, 1980, № ԺԱ, էջ 5—7):

Այս տարի, մարտի 22-ին, տեղի է ունենում Բեյրութում Համախմբումի Տիկնանց Վարչության կազմակերպած ճաշկերույթ-հանդիսությունը Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության քսանհինգերորդ տարեդարձի ուրախ առիթով:

Հանդիսությունը բացում է Համախմբումի ժրաջան ատենապետուհի տիկին Անգինե նշանները, բոլոր ներկաների ուրախ ծափողջույնների և սրտաբուխ բարեմաղթությունների ներքո:

Ապա Տ. Մասիս վարդապետը հանդես է գալիս Հայոց Հայրապետի քսանհինգամյա եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեության նվիրված խանդավառ խոսքով, որը լսվում է հարաճուն հետաքրքրությամբ և ոգևորությամբ:

Հանդիսության ժամանակ գործադրվում է նաև գեղարվեստական մի ծրագիր, բազմապատկելով հանդիսականների խանդավառությունը:

Բեյրութում գտնված օրերին Տ. Մասիս վարդապետը ներկա է լինում Թեքեյան վարժարանի սաների կողմից կազմակերպ-

ված ցուցահանդեսին, ապա ծնողական հավաքույթին, որտեղ խոսք է առնում շեշտելով կրոնական և հոգևոր դաստիարակության կարևորությունը հայ վարժարաններից ներս:

Մարտի 26-ին, Միջինք: Տ. Մասիս վարդապետը ներկա է լինում Բեյրութի առաջնորդանիստ Ս. Նշան եկեղեցում Արևագալի ժամերգության և ապա կեսօրին Ալեքս Մանուկյան դահլիճում Հ. Բ. Ը. Միության Տիկնանց Հանձնաժողովի կազմակերպած Միջինքի ճաշին:

Տ. Մասիս վարդապետը Բեյրութում գտնվելու օրերին այցելում է Անթիլիաս, Նորին Ս. Օծություններ Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսին և Տ. Գարեգին Բ աթոռակից-կաթողիկոսին՝ փոխանցելու համար Նրանց Հայոց Հայրապետի եղբայրական ողջույնները և զատկական շնորհավորանքի գրությունները:

Նույն նպատակով Մայր Աթոռի ներկայացուցիչը այցելում է նաև Բեյրութի Հայ կաթողիկե համայնքի ամենապատիվ Տ. Կետիկյան սրբազան պատրիարքին:

Տ. Մասիս վարդապետը Մայր Աթոռ է վերադառնում 14-օրյա իր պաշտոնական այցելությունից ստացած լավագույն տպավորություններով: